

Արմավիրի մարզի Արշալույս գյուղական համայնքի ղեկավարը հայտարարում է մրցույթ՝ աշխատակազմի համայնքային ծառայության հետևյալ թափուր պաշտոնը զբաղեցնելու համար

Արմավիրի մարզի Արշալույսի գյուղապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ (ծածկագիր 3.1-1)

Իրականացնում է պաշտոնի անձնագրով սահմանված լիազորություններ՝

ա) աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ կազմում է համայնքի բյուջեի նախագիծը.

բ) մասնակցում է տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու վերաբերյալ որոշման նախագծերի նախապատրաստման աշխատանքներին

գ) իրականացնում է հաշվիչ դրամական միջոցների մուտքագրման դուրս գրման գործառույթները.

դ) իրականացնում է հաշվապահական հաշվառման վարման, վճարման, փաստաթղթերի կազմման, ներկայացման, հաշվետվությունների ստուգման, ամփոփման և ներկայացման աշխատանքներին.

ե) ապահովում է համայնքի բյուջեի միջոցների նպատակային օգտագործումը.

զ) կազմում և ստորագրում է ֆինանսական փաստաթղթեր.

է) կատարում է աշխատակազմի քարտուղարի հանձնարարությունները ժամանակին և պատշաճ որակով.

ը) ապահովում է աշխատակազմի փաստաթղթային շրջանառությունը և լրացնում համապատասխան փաստաթղթեր.

թ) հետևում է աշխատակազմի քարտուղարի հանձնարարություններին համապատասխան ժամկետներում կատարման ընթացքին, որոնց արդյունքների մասին զեկուցում է աշխատակազմի քարտուղարին.

ժ) աշխատակազմի քարտուղարին ներկայացնում է իր աշխատանքային ծրագրերը անհրաժեշտության դեպքում իր լիազորությունների սահմաններում.

ժա) իրականացնում է աշխատակազմի առջև դրված գործառույթներից և խնդիրներից բխող իրավական ակտերի, առաջարկությունների, եզրակացությունների և այլ փաստաթղթերի պահպանության և արխիվացման աշխատանքները.

ժբ) մասնակցում է աշխատակազմի աշխատանքային ծրագրերի մշակման աշխատանքներին.

ժգ) իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

- ունի միջնակարգ կրթություն
- սույն պաշտոնի անձնագրի 10-րդ կետի <բ> ենթակետում նշված իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացությունը
- տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը
 - ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն
 - տիրապետում է ռուսերենին / ազատ/ և մեկ այլ օտար լեզվի /կարդում կարողանում է բացատրվել/:

Մրցույթը կկայանա 2015 թվականի հոկտեմբերի 13-ին ժամը 14:00-ին Արշալույսի գյուղապետարանի շենքում:

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է 2015 թվականի սեպտեմբերի 28-ը:

Փաստաթղթերը ընդունվում են ամեն օր ժամը 10:00-ից 16:00, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Այլ տեղեկությունների համար դիմել Արշալույսի գյուղապետարան (հեռ. (0231) 6-09-36) կամ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչություն (հասցե Աբովյան 71, հեռ. (0237) 2-76-49 (0237) 2-07-70):

Դիմող ՀՀ քաղաքացիները համայնքային ծառայության թափուր պաշտոնի մրցույթին մասնակցելու համար պետք է անձամբ ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.

1. Դիմում՝ (ձևը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս):
2. Կրթությունը հավաստող պետական նմուշի փաստաթղթի (փաստաթղթերի) պատճենը (պատճենները):
3. Արական սեռի անձինք ներկայացնում են զինգրքույկի կամ կցագրման վկայականի պատճենը:
4. Աշխատանքային գրքույկի պատճենը (ունենալու դեպքում):
5. Երկու լուսանկար՝ 3x4 չափսի:
6. Անձնագրի պատճենը: